Կարեկցության Աղոթք

Տերունական Աղոթք- Ներքին խաղաղության բանալին

Մաս 4

«Տո՛ւր մեզ այսօր մեր հանապազօրյա հացը։»
Մատթեոս 6:11

1- Աստծոն փնտրենք իբրև մեր կարիքների պատասխանը

Մատակարարողի խոստում

«Եթե դուք, որ չար եք, ձեր զավակներին բարի պարգևներ տալը գիտեք, հապա որքա՛ն առավել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, ովքեր խնդրում են իրեն։» Մատ 7:11

«Նա, որ իր Որդուն էլ չխնայեց, այլ մեզ բոլորիս համար նրան մահվան մատնեց, ինչպե՞ս նրա հետ մեզ ամեն ինչ չի շնորհի։» Հռովմայեցիս 8:32

Մենք հանձնվում ենք մտահոգության, բայց Աստված բուռն ցանկությամբ ուզում է հոգալ մեզ համար:

Գործադրում

- Նախորոք որոշիր որ նախ ուտելուց առաջ՝ աղոթես
- Ցուցակագրիր Աստծո նվերները քո ընտանիքի համար և ժամ տրամադրիր գոհության աղոթք անելու համար

2. Հայտնիր ամենօրյա կարեկցությունդ

Պայմանական խոստում

Աստված ուզում է որ մենք ամենօրյա կարիքները իրենից խնդրենք, դա այդ պատճառով չէ որ նա մեր աղաչանքը ամեն օր լսի, այլ որովհետև նա գիտի թե մենք մոռացկոտ ենք:

«Վաղվա մասին մի՛ հոգացեք, որովհետև վաղվա օրն ունի իր հոգսերը. յուրաքանչյուր օրվա հոգսերն ինքնին բավական են»։
Մատթեոս 6:34

Գործադրում

- Գրիր քո ամենօրյա կարեկցության հայտագիրը
- Այս շաբաթ անգիր արա Մատթ. 6:34 համարը

3. Հենվիր Աստծո միջոցներին

Նախապատրաստման խոստում

«Իմ Աստվածը թող համաձայն իր հարստության ձեր կարիքները հոգա Քրիստոս Հիսուսի փառքի միջոցով։»
Փիլիպպեցիս 4:19

«Ինձ աղքատություն կամ հարստություն մի՛ տուր, իմ բաժին հացո՛վ կերակրիր ինձ։» Առակաց 30:8

Բավարար լինելու դժվարությունը սա է որ միշտ ավելին եմ ուզում

Գործադրում

- Քո ընտանիքի հետ միասին խոսեցեք կարիքի և ագահության տարբերության մասին.
- Գործադրիր Փիլիպեցիս 4:6ը. *«Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն։»*

Հաջորդ Կիրակի

Մաքրության Աղոթք

Տերունական Աղոթք- Ներքին խաղաղության բանալին

Հովիվ Սարօ Խաչիկեան